ե. աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում է օրենքով նախատեսված խրախուսանքներ և կարգապահական տույժեր.

զ. աշխատակազմի համայնքային ծառայողի 65 տարին լրանալուց առնվազն մեկ ամիս առաջ համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություն այդ համայնքային ծառայողի պաշտոն զբաղեցնելը մինչև մեկ տարի ժամկետով շարունակելու թույլտվության մասին.

է. կազմակերպում է աշխատակազմում քննարկումների և խորհրդակցությունների անցկացման աշխատանքները.

ը. համայնքի ղեկավարին է զեկուցում ամենօրյա փոստը և թղթակցությունները.

թ. համայնքի ղեկավարի ստորագրությանն է ներկայացնում նրա որոշումները և կարգադրությունները.

11) աշխատակազմում կազմակերպում է տեխնիկական սպասարկման աշխատանքները.

12) ապահովում է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության այլ համայնքապետարանների աշխատակազմերի հետ.

13)համայնքի ղեկավարին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին.

14)իրեն անմիջական ենթակա և հաշվետու համայնքային ծառայողների կողմից իրենց կատարած աշխատանքների մասին ներկայացրած կիսամյակային հաշվետվությունների վերաբերյալ տալիս է համապատասխան եզրակացություններ.

15)ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը.

16)ապահովում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը.

17)կազմակերպում և ապահովում է համայնքապետարանի աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշումների նախագծերի նախապատրաստմանը.

18)կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը.

19)ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրատարակումը.

20)կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ.

21)վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ.

22)ապահովում է ավագանու որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում.

23)միջոցներ է ձեռնարկում պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսավարող սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը.

24)կազմակերպում է համայնքի բնակիչների հաշվառումը.

25)համայնքի ղեկավարի հանձնարարությամբ, նրա անունից ներկայացնում է համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում.

26)եզրակացություն է տալիս համայնքի ղեկավարին՝ հանրահավաքներ, երթեր, ցույցեր և զանգվածային այլ միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ թույլտվություն տալու մասին.

27)կազմակերպում է փաստաթղթերի պատճենների և կրկնօրինակների տրամադրումը համայնքի արխիվից.

28)խթանում է տնտեսական գործունեություն նախաձեռնողների ծրագրերի իրականացմանը և նպաստում ու օժանդակում է համայնքում նրանց գործունեության առավել արդյունավետ իրականացմանը.

29)միջոցներ է ձեռնարկում տեխնոլոգիական աղետները կանխելու, տարերային և տեխնոլոգիական աղետների հետևանքները վերացնելու ուղղությամբ.

30)ապահովում է տեղամասային կենտրոնում բնականոն քվեարկության համար անհրաժեշտ կահավորումը.

31)եզրակացություն է ներկայացնում համայնքի ղեկավարին՝ խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու մասին.

32)համայնքի ղեկավարի վավերացմանն է ներկայացնում համայնքի բնակիչ հանդիսացող անձանց կտակը.

33)համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում համայնքի բնակիչ համարվող անձանց տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու, աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ ու փոստային առաքումներ (այդ թվում՝ դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագրերը.

34)օրենքով սահմանված կարգով կազմակերպում է համայնքի զինապարտների գրանցամատյանների վարման աշխատանքները, համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություն զինապարտների վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար.

35)օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին, իրականացնում է՝զորահավաքային նախապատրաստության,զորահավաքի, գաղտնի փաստաթղթերի մշակման,գաղտնի գործավարության վարման և գաղտնի ռեժիմի ապահովման աշխատանքներ»: լրացում 04 մարտի 2022 թվականի N 173**որոշմամբ**

36)իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում համայնքի ղեկավարին անհապաղ ներկայացնում է առաջարկություն տարածքային զինվորական կոմիսարիատին այդ մասին գրավոր տեղեկատվություն տրամադրելու համար.

37)իր իրավասության սահմաններում մասնակցում է նախազորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման բնագավառում ՀՀ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների իրականացումը.

38)անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին.

39)հանդիսանում է համայնքի պաշտոնական կայքի վարման պատասխանատու,

40) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Աշխատակազմի ղեկավարն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

## VIII. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

1. Աշխատակազմի ղեկավարն օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

Հավելված N16
ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի
2021 թ.հունիսի 15 -ի N 324 - Ա որոշման
2021 թ. նոյեմբերի 16-ի N 685 - Ա որոշման
2023 թ. օգոստոսի 30 -ի N 674 - Ա որոշման
**Փոփ.26.01.2026թ.N 47-Ա որոշմամբ**
**Փոփ.08.09.2026թ.N 862-Ա որոշմամբ**

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
# ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ

Հաստատված է
ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավար

Հ.Ռուբենյան

| **1. Ընդհանուր դրույթներ** |
|---|
| **1.1.** Պաշտոնի անվանումը, ծածկագիրը՝3.2-7<br>1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմ» կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ աշխատակազմ) առաջին կարգի մասնագետ:Առաջին կարգի մասնագետի պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի երկրորդ ենթախմբում:<br>**1.2.** Ենթակա և հաշվետու է.<br>Առաջին կարգի մասնագետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին:<br>**1.3.** Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները.<br>Առաջին կարգի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է, առաջատար մասնագետը, 1-ին կարգի մասնագետներից մեկը՝ քարտուղարի հայեցողությամբ:<br>Օրենքով նախատեսված դեպքերում առաջին կարգի մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:<br><br>**1.4.** Աշխատավայրը<br>Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմ» կառավարչական հիմնարկ: |
| **2. Պաշտոնի բնութագիրը** |

**2.1.** Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1.Առաջին կարգի մասնագետը՝

1) կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

2)ապահովում է փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

3) ապահովում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին.

4) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

5) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

6) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.

7) կատարում է աշխատակազմի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը .

8) իրականացնում է համայնքի ղեկավարի մոտ բնակիչների հերթագրում.

9)իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

10) իրականացնում է համայնքի Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները:

11)Համարվում է համայնքապետարանի ազդարարման համար պատասխանատու անձ:

12)Համարվում է երիտասարդական աշխատող:

Առաջին կարգի մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

## 3. Կազմակերպական շրջանակը

**3.1.**Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

1.Առաջին կարգի մասնագետը իրեն ենթակա աշխատողներ չունի:

2.Առաջին կարգի մասնագետը՝

1) կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները.

2) պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

**3.2.** Որոշումներ կայացնելու լիազորությունները.

1.Առաջին կարգի մասնագետը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանըև հանձնարարականների կատարմանը:

**3.3.** Շփումները և ներկայացուցչությունը.

Առաջին կարգի մասնագետը՝

1)աշխատակազմի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում՝ աշխատակազմի աշխատողների և պաշտոնատար անձանց հետ.

2) աշխատակազմից դուրս շփվում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ.

3) աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի:

**3.4.** Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը.
1.Առաջին կարգի մասնագետը, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ, մասնակցում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող խնդիրների լուծմանը և գնահատմանը, աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող բարդ խնդիրների բացահայտմանը, դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին մասնակցելու լիզորություններ չունի:

## 4. Պաշտոնին ներկայացվող պահանջները

**4.1.** Կրթություն, որակավորման աստիճանը.
1.Առաջին կարգի մասնագետը՝ ունի միջնակարգ կրթություն:
**4.2.** Մասնագիտական գիտելիքները և հմտությունները.
1)ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ,
2) ունի «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
**4.3.** Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը.
առանց աշխատանքային ստաժի և փորձի:

**5. Համայնքային ծառայության դասային աստիճանը.**
Օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 863-Ա

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՆՈՔՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 161-րդ հոդվածների , հիմք ընդունելով Կապուտան բնակավայրի վարչական ղեկավար դիմումը, որոշում եմ ՝

1.Տրամադրել Կապուտան բնակավայրի վարչական ղեկավար Հովհաննես Ենոքյանին 2026 թվականի ամենամյա արձակուրդը՝ 20 աշխատանքային օր և 2026 թվականի լրացուցիչ արձակուրդից 4 աշխատանքային օր՝ սույն թվականի սեպտեմբերի 11-ից մինչև հոկտեմբերի 15-ը ներառյալ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

08 սեպտեմբերի 2026 թ.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 864-Ա

## ԳՐԻԳՈՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԻՆՉԵՎ 20% ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի պահանջները, Գրիգոր Անդրանիկի Վարդանյանի դիմումը և հաշվի առնելով, որ նրան հատկացված հողամասից ավել օգտագործվող հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջության՝ որոշում եմ.

1. Գրիգոր Անդրանիկի Վարդանյանին հատկացված՝ / հիմք Կոտայքի շրջանի խորհրդի գործկոմի 08.08.1987թ. արձ. թիվ 11 որոշում / 0.1հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերից մինչև 20% ավել օգտագործվող 0.01463հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 09
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 865-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետով, Մովսես Վազգենի Մարտիրոսյանի դիմումը՝ որոշում եմ.

1. ՀՀ, Կոտայքի մարզի, Ակունք համայնքի Զառ բնակավայրում Մովսես Վազգենի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-027-0009-0032 կադաստրային ծածկագրերով 0.155հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ ՀՀ, մարզ Կոտայք, համայնք Ակունք, Զառ, Զորավար Անդրանիկի փողոց, 8/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2026 թ. սեպտեմբերի 09
գ. Ակունք

# Հասցե տրամադրելու մասին որոշում (որոշման քաղվածք)

## ՔԱՂՎԱԾՔ

*Անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին*

| Հ.Հ. | Դիմողը | Տրամադրվող հասցեն | Ծածկագիր | QR-կոդ |
|---|---|---|---|---|
| 1 | Մովսես Վազգենի Մարտիրոսյան | Ակունք, Ձառ, Ձորավար Անդրանիկի փողոց, 8/1 բնակելի տուն | 070225YC679E | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 866-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՔԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածները և համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 08-ի թիվ 80-Լ որոշման հավելվածը՝ որոշում եմ.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30032026-07-0246 վկայական / 07-049-0245-0175 կադաստրային ծածկագրով, 0.25հա մակերեսով հողամասը 12 500 000 / տասներկու միլիոն հինգ հարյուր հազար / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03072026-07-0224 վկայական / 07-049-0245-0172 կադաստրային ծածկագրով, 0.22հա մակերեսով հողամասը 11 000 000 / տասնմեկ միլիոն / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06072026-07-0187 վկայական / 07-049-0245-0174 կադաստրային ծածկագրով, 0.25հա մակերեսով հողամասը 12 500 000 / տասներկու միլիոն հինգ հարյուր հազար / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
4. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03072026-07-0219 վկայական / 07-049-0245-0178 կադաստրային ծածկագրով, 0.22հա մակերեսով հողամասը 11 000 000 / տասնմեկ միլիոն / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25082026-07-0255 վկայական / 07-028-0127-0074 կադաստրային ծածկագրով, 0.125հա մակերեսով հողամասը 9 600 000 / իննը միլիոն վեց հարյուր հազար / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
6. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05082026-07-0012 վկայական / 07-028-0127-0063 կադաստրային ծածկագրով, 0.125հա մակերեսով հողամասը 9 600 000 / իննը միլիոն վեց հարյուր հազար / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
7. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04082026-07-0288 վկայական / 07-028-0127-0064 կադաստրային ծածկագրով, 0.125հա մակերեսով հողամասը 9 600 000 / իննը միլիոն վեց հարյուր հազար / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
8. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05082026-07-0122 վկայական / 07-028-0127-0065

կադաստրային ծածկագրով, 0.108հա մակերեսով հողամասը 9 600 000 / իննը միլիոն վեց հարյուր հազար / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:

9. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05082026-07-0110 վկայական / 07-028-0127-0069 կադաստրային ծածկագրով, 0.125հա մակերեսով հողամասը 9 600 000 / իննը միլիոն վեց հարյուր հազար / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
10. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05082026-07-0181 վկայական / 07-028-0127-0070 կադաստրային ծածկագրով, 0.125հա մակերեսով հողամասը 9 600 000 / իննը միլիոն վեց հարյուր հազար / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
11. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05082026-07-0117 վկայական / 07-028-0127-0073 կադաստրային ծածկագրով, 0.114հա մակերեսով հողամասը 9 600 000 / իննը միլիոն վեց հարյուր հազար / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
12. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14072026-07-0145 վկայական / 07-049-0212-0066 կադաստրային ծածկագրով, 0.2հա մակերեսով հողամասը 8 000 000 / ութ միլիոն / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
13. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14072026-07-0129 վկայական / 07-049-0212-0067 կադաստրային ծածկագրով, 0.24հա մակերեսով հողամասը 9 600 000 / իննը միլիոն վեց հարյուր հազար / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
14. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14072026-07-0225 վկայական / 07-049-0212-0068 կադաստրային ծածկագրով, 0.2հա մակերեսով հողամասը 8 000 000 / ութ միլիոն / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
15. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28072026-07-0033 վկայական / 07-049-0212-0070 կադաստրային ծածկագրով, 0.2հա մակերեսով հողամասը 8 000 000 / ութ միլիոն / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
16. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29072026-07-0117 վկայական / 07-049-0212-0071 կադաստրային ծածկագրով, 0.2հա մակերեսով հողամասը 8 000 000 / ութ միլիոն / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
17. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04082026-07-0092 վկայական / 07-049-0212-0072 կադաստրային ծածկագրով, 0.24հա մակերեսով հողամասը 9 600 000 / իննը միլիոն վեց հարյուր հազար / ՀՀ դրամ մեկնարկային գնով հայտարարել աճուրդ վաճառքի:
18. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 26 թ. 04 09
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 867-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետով՝ որոշում եմ.

1. ՀՀ, Կոտայքի մարզի, Ակունք համայնքի Ակունք բնակավայրում համայնքային սեփականություն հանդիսացող՝ 07-009-0116-0515 կադաստրային ծածկագրերով, 0.07027հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ ՀՀ, մարզ Կոտայք, համայնք Ակունք գյուղ Ակունք, 20-րդ փողոց, 14/1 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

09 սեպտեմբերի 2026 թ.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 868-Ա

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ « Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 1-ին կետով », «Քաղաքաշինության մասին օրենքի 143-րդ հոդվածով », « Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով », « Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 08-ի թիվ 2-8 դրական եզրակացությամբ », հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 54-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող մարզ Կոտայք, համայնք Ակունք գյուղ Զովաշեն՝ 07-028-0127-0001-ից կադաստրային ծածկագրով, 0.25հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել՝ բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա, օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատում իրականացնելու համար:
2. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված կարգով ընթացք չտալու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

10 սեպտեմբերի 2026 թ.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 869-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետով՝ որոշում եմ.

1. ՀՀ, Կոտայքի մարզի, Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրում համայնքային սեփականություն հանդիսացող՝ 07-049-0012-0030-ից կադաստրային ծածկագրերով, 0.01247հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ ՀՀ, մարզ Կոտայք, համայնք Ակունք գյուղ Նոր գյուղ, 12-րդ փողոց, 5/1 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

10 սեպտեմբերի 2026 թ.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 870-Ա

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026 թվականի աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ որոշում եմ՝

1. Ջառ բնակավայրի վարչական ղեկավար Էդիկ Բաբախանյանին տալ դրամական պարգևատրում՝ - 350000 ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2026 թ. սեպտեմբերի 10
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 871-Ա

## ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման կարգի 2-րդ կետի, հիմք ընդունելով Ակունք համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 09-ի թիվ 60-Ա որոշման հավելվածը և Գեղամ Հենրիկի Խաչատրյանի լ/անձ դիմումը՝ որոշում եմ.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող՝ / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10092026-07-0144 վկայական / 07-009-0116-0515 կադաստրային ծածկագրով 0.07027հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասը ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել՝ 07-009-0116-0362 կադաստրային ծածկագրով, 0.34հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասի սեփականատեր՝ Արտավազդ Նորիկի Պետրոսյանին 2 500 000 / երկու միլիոն հինգ հարյուր հազար / ՀՀ դրամով: Քանի, որ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի մուտք ու ելքը իրականացվում է Արտավազդ Նորիկի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի տարածքով, այդ իսկ պատճառով ցանկություն է հայտնել գնել տվյալ հողամասը: Հողամասը չի կարող օգտագործվել այլ նպատակային նշանակմամբ և նպատակահարմար չէ ընդլայնել այլ հողամասի:
2. Հողի օտարման գումարը օրենքով սահմանված ժամկետում վճարել Ակունք համայնքի բյուջե / հաշվեհամար 900105203179 /:
3. Սույն որոշման կատարման ընթացքի և նոտարական վավերացման պարտականությունը դրվում է Մարտոց Դիլֆինի Սարիբեկյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 872-Ա

## ՍԻՐԱՆՈՒՇ ՆԱՐԻՄԱՆԻ ՍԱՄՍՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սիրանուշ Նարիմանի Սամսոնյանի դիմումը և << Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին >> 2002 թվականի դեկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Սիրանուշ Նարիմանի Սամսոնյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության ինչպես նաև հնագիտական պատմամշակույթային հողերի պահպանման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմաներին, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ՝ որոշում եմ.

1. Ճանաչել Սիրանուշ Նարիմանի Սամսոնյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի 07-028-0127-0001-ից կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0.25հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրանց կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Հողամասի սահմանները որոշում են << ԳԵՈԳԼՈԲԱԼ >> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Ակունք համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Սիրանուշ Նարիմանի Սամսոնյանի սեփականության իրավունքը ամրագրված հողամասի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

10 սեպտեմբերի 2026 թ.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 873-Ա

## ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1 ՓՈՂՈՑ 16/1 ՏԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՎԱՐԴՈՒՀԻ ԱՐՏՈՒՇԻ ՇԻՐՎԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՂԲՈՐ՝ ՀԱԿՈԲ ԱՐՏՈՒՇԻ ՇԻՐՎԱՆՅԱՆԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով, հիմք ընդունելով «ՀՈՄԵՐ» ՍՊԸ-ի կողմից կատարված բաժանման հատակագիծը, Խնամակալության և հոգաբարձության կողմից տրամադրված համաձայնությունը որոշում եմ.

1. Տալ համաձայնություն Հակոբ Արտուշի Շիրվանյանին՝ անգործունակ Վարդուհի Արտուշի Շիրվանյանի ներկայացուցչին, ըստ « ՀՈՄԵՐ» ՍՊԸ-ի կողմից բաժանման սխեմայի, բաժանել 07-049-0015-0015 կադաստրային ծածկագրով հողամասը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

10 սեպտեմբերի 2026 թ.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 874-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետով, Սիրանուշ Նարիմանի Սամսոնյանի դիմումը՝ որոշում եմ.

1. ՀՀ, Կոտայքի մարզի, Ակունք համայնքի Զովաշեն բնակավայրում Սիրանուշ Նարիմանի Սամսոնյանին սեփականության իրավունքով պատկանող՝ / հիմք հողային բարեփոխումների և սեփականաշնորհման քաղվածք / 07-028-0127-0001-ից կադաստրային ծածկագրերով 0.25հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ ՀՀ, մարզ Կոտայք, համայնք Ակունք գյուղ Զովաշեն, Ա.Սաֆարյան թաղամաս, 16 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

11 սեպտեմբերի 2026 թ.
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 875-Ա

## ԲԱԺԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 թիվ 2387-Ն որոշման պահանջներին համաձայն և հիմք ընդունելով Հայկ Գրիգորյանի դիմումը՝ որոշում եմ.

1. ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կոտայք բնակավայրում Հայկ Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-038-0022-0015 կադաստրային ծածկագրով, 0.318հա անշարժ գույքի բաժանման արդյունքում առաջացած՝ S1=0.28708հա բաժանվող մասին տրամադրել մարզ ՀՀ Կոտայք, համայնք Ակունք, գյուղ Կոտայք, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 14/1 անասնաշենք, իսկ S2=0.03092հա բաժանվող մասին տրամադրել մարզ ՀՀ Կոտայք, համայնք Ակունք, գյուղ Կոտայք, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 14/2 հողամաս:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ**

14 սեպտեմբերի 2026 թ.
գ. Ակունք

# Հասցե տրամադրելու մասին որոշում (որոշման ձաղվածք)

## ՔԱՂՎԱԾՔ

*Անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին*

| Հ.Հ. | Դիմողը | Անշարժ գույքի գտնվելու վայրը(հասցեն) |
|---|---|---|
| 1 | Հայկ Գրիգորյան | 6-րդ փողոց 2-րդ նրբանցք |

| Հ.Հ. | Դիմողը | Տրամադրվող հասցեն | Ծածկագիր | QR-կոդ |
|---|---|---|---|---|
| 1 | Հայկ Գրիգորյան | Ակունք, Կոտայք, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 14/2 հողամաս | 07052YP6AJZL | |
| 2 | Հայկ Գրիգորյան | Ակունք, Կոտայք, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 14/1 անասնաշենք | 07052VZ7NGBC | |